



ՄԱԿ-ի ԼՐԱՏՈՒ

ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակ

N°2

ԲՈՎԱԼՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱԿ-ի Փախստականների գծով գերագույն հանձնակատար (UNHCR)	2
ՄԱԿ-ի Զարգացման ծրագիր (UNDP)	4
ՄԱԿ-ի համակարգը	7
Տարեցների միջազգային տարի	8
ՄԱԿ-ի տարեդարձը	9
ՄԱԿ-ի Հասարակական տեղեկատվության բաժին (DPI)	10
ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամ (UNFPA)11	
ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամ (UNICEF) 12	
Առողջապահության համաշխարհային կազմակերպություն (WHO)	13
Համաշխարհային պարենի ծրագիր (WFP) 14	
Միգրացիայի միջազգային կազմակերպություն (IOM)	15

ՆԱԽԱԳԱՀ ՔՈՉԱՐՅԱՆԻ ԱՅՑԸ ՄԱԿ-Ի ԳՐԱՍԵՆՅԱԿ

1999թ. նոյեմբերի 29-ից դեկտեմբերի 1-ը Հայաստան այցելեց ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի տեղակալ, ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի ղեկավարի տեղակալ և ՄԱԶԾ Արևելյան Եվրոպայի և ԱՊՀ երկրների վարչության պետ պրն. Անտոն Կրուդերինկը:

Այս այցելությունը, թոշակի անցնելուց առաջ, պրն. Կրուդերինկի վերջին պաշտոնական այցն էր Հայաստան: Այցելության նպատակն էր քննարկել ՀՀ կառավարության հետ ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի կողմից Հայաստանին տրամադրված զարգացման օժանդակությունը՝ ի նպաստ երկրում տեղի ունեցող ժողովրդավարական բարեփոխումների և ուրվագծել ապագա համագործակցության ծրագրերը:

Այցելության ընթացքում պրն. Անտոն Կրուդերինկը հանդիպումներ ունեցավ ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի, ՀՀ Ազգային ժողովի նախագահ Արմեն Խաչատրյանի և ՀՀ արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանի հետ:

Պրն. Անտոն Կրուդերինկը ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի համակարգում ունեցել է փայլուն և երկարատև աշխատանքային կենսագրություն՝ զբաղեցնելով ղեկավար պաշտոններ ՄԱԶԾ Նյու Յորքի գլխավոր գրասենյակում և Լատինական Ամերիկայի մի շարք երկրներում: Վերջին հինգ տարիների ընթացքում ղեկավարել է ՄԱԶԾ Արևելյան Եվրոպայի և ԱՊՀ երկրների վարչությունը:

Նոյեմբերի 30-ին ՀՀ նախագահ պրն. Ռոբերտ Քոչարյանը, բարձր գնահատելով պրն. Կրուդերինկի ծառայությունները Հայաստանի նկատմամբ տեղական զարգացման, ինչպես նաև կառավարման բնագավառներում, աննախադեպ մի նախաձեռնությամբ այցելեց ՄԱԿ-ի գրասենյակ և պրն. Կրուդերինկին շնորհեց նախագահական պարգև:

Նախագահ Ռոբերտ Քոչարյանի նամակը Հայաստանում ՄԱԿ-ի մշտական համակարգող տիկին Կատիցա Չեկալովիչին

Ինչ համար կարևոր և հաճելի էր ա/ք նոյեմբերի 30-ի իմ այցը ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակ: Անմիջականորեն փնտնելով Հայաստանում ՄԱԿ-ի գործակալությունների գործունեությունը՝ մեկ անգամ ևս համոզվեցի, որ մեր համագործակցությունը ՄԱԿ-ի կառույցների հետ ունի ամուր հիմքեր: Մեզ համար մեծ նշանակություն ունի Ձեր բերած նպաստը Հայաստանի բարեփոխումների ընթացքին: Համագործակցության նման արդյունավետությունն, անշուշտ, պայմանավորված է անչամբ Ձեր և ՄԱԿ-ի գրասենյակի բոլոր աշխատակիցների անխնայ աշխատանքով, ինչը մենք բարձր ենք գնահատում և երախտագրությամբ ընդունում: Վստահ եմ, որ մեր համագործակցությունը կշարունակվի խորանալով և ընդգրկելով նոր ոլորտներ:

Եվս մեկ անգամ հաջողություններ եմ մտադրում Ձեզ և Ձեր գործընկերներին Ձեր շնորհակալ գործունեության մեջ:

ՀՀ ՆԱԽԱԳԱՀ ՌՈՒԲԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆ



ՄԱԿ-ի Փախստականների գծով գերագույն հանձնակատարի խոսքը Հայաստանում ՄԱԿ-ի աշխատակազմին

Հայաստան իմ այցելության ժամանակ ես հնարավորություն ունեցա հանդիպել ոչ միայն ՓԳԳՀ-ի, այլև ՄԱԿ-ի այլ գործակալությունների իմ կողմակցների հետ: Ես այցելել եմ նաև ճյուղային ծրագրերին և բարձր եմ գնահատում Հայաստանի կառավարության, ՄԱԿ-ի և հասարակական կազմակերպությունների աշխատողների նվիրվածությունը, երբ աշխատում են թեթևացնել փախստականների տառապանքը, նրանց կացությունից դուրս գալու ելք փնտրում ու գտնում, օժանդակում երկրի ժողովրդի ջանքերին՝ հանուն տնտեսական ու սոցիալական զարգացման: Ինձ համար հատկապես տպավորիչ էր Հայաստանի հասարակական կազմակերպությունների աշխատանքը: Առավել խոցելիության պատճառների նրանց դատապարտումը, օգնություն ցույց տալու նրանց արդյունավետությունը այս երկրում քաղաքացիական հասարակության համար լավ ասպագա են գուշակում: Հուսով եմ, որ շուտով խաղաղությունը կթագավորի Հարավային Կովկասում, քանզի խաղաղության պայմաններում միայն հայերի և նրան աջակցողների ճիգերը հաջողությամբ կպսակվեն:



Sadako Ogata

Սադակո Օգատա
ՄԱԿ-ի Փախստականների գծով գերագույն հանձնակատար



ՄԱԿ-Ի ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԳԾՈՎ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՐԱՆՁՆԱԿԱՏԱՐԻ ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆ

Անդրկովկասյան երեք երկրներ այցելության շրջանակներում սեպտեմբերի 1-ից 4-ը Հայաստանում էր գտնվում ՄԱԿ-ի Փախստականների գծով գերագույն հանձնակատար Սադակո Օգատան: Նրան ուղեկցում էին ՄԱԿ-ի Փախստականների գծով գերագույն հանձնակատարի եվրոպական գրասենյակի տնօրեն Աննե-Վիլլեմ Բեյլելեյդը, գերագույն հանձնակատարի հատուկ օգնական Ֆիլիպո Գրանդինի եւ գերագույն հանձնակատարի կենտրոնականի ԱՊՀ երկրների բաժնի ավագ վերլուծաբան Բոգդան Նահայրյան:

Այցի ընթացքում տիկին Օգատան հանդիպումներ է ունեցել Հայաստանի բարձրաստիճան պաշտոնյաների՝ ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի, Ազգային ժողովի նախագահ Կարեն Գեմիլի-ճյանի, վարչապետ Վազգեն Սարգսյանի, արտգործնախարար Վարդան Օսկանյանի, սոցիալական ապահովության նախարար Ռազմիկ Մարտիրոսյանի, կաթողիկոսական տեղապահ Ներսես արքեպիսկոպոս Պողոսյանի հետ:

Հանդիպումների ժամանակ արժարժվել են ՄԱԿ-ի ՓԳԳՀ հայկական գրասենյակի եւ նրա հետ համագործակցող կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերին առնչվող հարցեր:

ՓԳԳՀ բարձրաստիճան պատվիրակությունն այցելել է Հայաստանի շրջաններ, որտեղ ՄԱԿ-ի Փախստականների գծով գերագույն հանձնակատարը ծանոթացել է փախստականների վիճակին, ՀՀ Փախստականների մասին օրենքի իրագործմանը եւ փախստականների կողմից Հայաստանի քաղաքացիությունը ընդունելու գործընթացին:

«Փախստականների կյանքը Հայաստանում կայունանում է, իսկ առկա խնդիրների հարթահարման համար անհրաժեշտ է շատ բան անել եւ միկրովարկերի, եւ տարբեր ծրագրերի իրականացման առումով»,- հայտարարել է ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատար Սադակո Օգատան Արարատի մարզի Սիս գյուղ կատարած այցի ժամանակ: Այս գյուղում տիկին Օգատան հնարավորություն ունեցավ մասնակցելու 100 փախստականներին Հայաստանի քաղաքացիության անձնագիր հանձնելու արարողությանը:

«Շնորհավորում եմ ձեզ նոր կյանք սկսելու առթիվ, շատ կարեւոր է, որ դուք դառնում եք հասարակության մի մասը»,- ներկաներին ուղղված իր խոսքում հայտարարեց տիկին Օգատան:

Սադակո Օգատան այցելեց նաեւ «Շիրակ» կոմունալ կենտրոն, որտեղ

ապրում են փախստականներ Ադրբեջանից: Իր այցելության ժամանակ Սադակո Օգատան կոչ է արել ավելի մեծ ուշադրություն դարձնել ծեր փախստականների խնդիրներին:

ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի հետ հանդիպման ժամանակ ՄԱԿ-ի Փախստականների գծով գերագույն հանձնակատարը հատկապես կարեւորել է փախստականների քաղաքացիությանը, ճշգրիտ հաշվառման ու շարժման վերաբերող հարցերի կարգավորումը: Նշելով, որ փախստականների խնդիրը Հայաստանի համար բավականին լուրջ է, Ռոբերտ Քոչարյանը վստահություն է հայտնել, որ համատեղ ուժերով հնարավոր կլինի լուծումներ գտնել: Նա բարձր է գնահատել Սիս գյուղում ազգերի կազմակերպության եւ անձամբ տիկին Օգատայի կողմից փախստականների նկատմամբ ցուցաբերված օժանդակությունը:

Տիկին Օգատայի խոսքերով, փախստականների խնդիրների վերջնական լուծման վերաբերյալ իրենց եւ կառավարության մտեցումներն ու տեսակետները համընկնում են, եւ կազմակերպությունը պատրաստ է առավել սերտ համագործակցության:

Փախստականների գծով գերագույն հանձնակատարը նաեւ այցելել է ցեղասպանության թանգարան, որտեղ նա արձանագրություն է թողել պատվավոր հյուրերի հուշամատյանում, ինչպես նաեւ ծաղկեպսակ դրել Եղեռնի զոհերի հուշակոթողի անշեջ կրակի մոտ:

ՀՊԱՏԱԿԱԳՐՈՒՄԸ ԲՆԱԿԱՆ ՔԱՅԼ Է

1988-1992թթ. 419 հազար հայ փախստականներ ղարաբաղյան հակամարտության հետեւանքով Ադրբեյջանից արտագաղթել են Հայաստան: Հայաստանի կառավարության տվյալներով, 1997թ. Հայաստանում գրանցված էր 311 հազար փախստական, որոնցից 64 հազարը այսօրվա դրությամբ ժամանակավորապես գտնվում է Հայաստանից դուրս: Երկար տարիներ ապրելով Հայաստանում՝ փախստականների մեծ մասը հիմնավորվել է Հայաստանում եւ ստացել սոցիալական, կրթական եւ առողջապահական պետական կառույցներից օգուտները: Կառավարության իրավունքներ եւ հնարավորություն: Բացի այդ, փախստականները սոցիալ-տնտեսական նույն խնդիրներն ունեն, ինչ տեղի բնակիչները: Այդ պատճառով հայ փախստականների հպատակագրմանը նպաստելու գործընթացը ՄԱԿ-ի ՓԳԳՀ-ի կողմից դիտվում է որպես ինտեգրացման հիմնական բաղադրիչ: Հայաստանի կառավարությունը ՓԳԳՀ-ի հետ համատեղ դյուրացրել է Հայաստանի քաղաքացիություն ստանալը փախստականների կողմից:

Հայաստանի բնակչության տեղաշարժի եւ փախստականների գործերի վարչությունը ՓԳԳՀ-ի հիմնական գործընկերն է հպատակագրման հարցում: Այդ վարչության հետ միասին ՓԳԳՀ-ը կազմակերպել է մի շարք սեմինարներ, համաժողովներ, քննարկումներ եւ հանդիպումներ համապատասխան մարմինների մասնակցությամբ, որոնք հիմնականում նվիրված էին հպատակագրման մեխանիզմների ստեղծմանը: 1999թ. ՓԳԳՀ-ը շարունակում էր աշխատանքներ իրականացնել վերոհիշյալ վարչության հետ

- 1) պետական եւ մարզային կառավարման մարմինների համար հնարավորությունների ստեղծման,
 - 2) քաղաքացիություն ստանալու կատարյալ մեխանիզմի ստեղծման,
 - 3) հպատակագրման լրատվական քարոզարշավի կազմակերպման,
 - 4) եւ համապատասխան մարմիններին իրավաբանական եւ գործնական աջակցության ուղղությամբ:
- Փախստականների հպատակագրման ընթացքին



Հայաստանում խոչընդոտում է ոչ միայն սոցիալ-տնտեսական վատթար վիճակը, այլև փախստականների որոշ ակնկալիքներ, ինչպիսիք են Ադրբեյջանում թողած ունեցվածքի դիմաց փոխհատուցումը, ճանփորդական փաստաթղթերը, որոնք, ըստ նրանց, հնարավորություն կընձեռեն ազատորեն տեղաշարժվել աշխարհով մեկ: Այս առումով ՓԳԳՀ-ը եւ ՀՀ փախստականների վարչության կողմից ձեռնարկված լրատվական քարոզարշավը ձեռք է բերում մեծ կարեւորություն, քանի որ հնարավորություն է տալիս հաղթահարել հոգեբանական պատմեղները եւ ցրել անհիմն հույսերը: Լրատվական քարոզարշավի արդյունավետության վկայությունը քաղաքացիություն ստանալ ցանկացողների աճող թիվն է: Ըստ փախստականների վարչության տվյալների, եթե ընթացիկ տարվա օգոստոսին այն փախստականների թիվը, ովքեր հրաժարվել են փախստականի կարգավիճակից եւ ստացել Հայաստանի քաղաքացիություն, կազմել է 442 մարդ, ապա սեպտեմբերին նրանց թիվը հասել է 1645-ի, իսկ հոկտեմբերին՝ արդեն 1982 մարդու: Այսպիսով, օգոստոս-հոկտեմբեր ամիսներին 4069 փախստականներ դարձել են Հայաստանի քաղաքացիներ:

ՓԳԳՀ-ը հայ փախստականների հպատակագրումը միշտ դիտել է որպես ինտեգրացման բնական քայլ: ՓԳԳՀ-ը շարունակելու է ընդլայնել հպատակագրման քարոզարշավը եւ տեխնիկական ու վարչական օգնության ցուցաբերումը պետական այն մարմիններին, որոնք ընդգրկված են հպատակագրման գործընթացում:

ՓԱՒՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԲՆԱԿՆԵՐԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՏԵՂՈՒՄԸ

Այս տարի ՓԳԳՀ-ի Հայաստանի գրասենյակը եւ Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամը(ՀՍՆՀ) պայմանավորվել են համատեղել հնարավորությունները փախստականներին եւ կարիքավոր տեղաբնակներին օժանդակելու ուղղությամբ:

Այդ աջակցությունը հանգում է ոռոգման եւ խմելու ջրի համակարգերի շինարարությանը կամ վերանորոգմանը գյուղական վայրերում, որտեղ փախստականները մեծամասնություն են կազմում:

Այդ նախագծերի իրականացումը, որոնցից օգուտներն են թե՛ փախստականները, եւ թե՛ տեղի համայնքները, ոչ միայն կբավարարի համայնքների կարիքները, այլ նաեւ կապահովի սոցիալական կայուն ինտեգրացված եւ

ներդաշնակ զարգացում փախստականների եւ տեղաբնակների համար:

ՓԳԳՀ-ՀՍՆՀ համատեղ ծրագրերը փաստորեն ՓԳԳՀ-ի, Հայաստանի կառավարության, Համաշխարհային բանկի եւ տվյալ համայնքի քառակողմ համագործակցության արդյունք են: Այդ ծրագրերը ենթադրում են հիմնական ենթակառուցվածքի վերականգնում հիմնականում փախստականներով բնակեցված վայրերում, համայնքի մոբիլիզացում, որպեսզի նա կարողանա իրականացնել եւ շարունակել այդ ծրագրերը:

Ծրագրերի իրականացման գործում հատուկ ուշադրություն է հատկացվում տվյալ համայնքների մասնակցությանը, որոնք

պետք է ապահովեն ծրագրի արժեքի 10 տոկոսը կամ ֆինանսական, կամ նյութական ձեւով: Բացի այդ, համայնքը մասնակցում է կապալառուի ընտրությանը: ՓԳԳՀ-ը եւ ՀՍՆՀ-ն ներդրում են ծրագրի արժեքի 45-ական տոկոսը:

ՀՍՆՀ առաջարկած 7 մարզերի 71 բնակավայրերից ՓԳԳՀ-ը ընտրել է 6 մարզերի 12 բնակավայրեր, որտեղ իրականացվելիք ծրագրերը կազմում են 250 հազար դոլար, այսինքն՝ ընդհանուր ծրագրի բյուջեի 45%-ը: ՓԳԳՀ-ը եւ ՀՍՆՀ-ն ակնկալում են, որ 12 բնակավայրերի 37 հազար բնակիչներ կօգտվեն այդ ծրագրից: Ներկայումս ծրագիրը երեք բնակավայրերում մոտենում է ավարտին:



ՓԳԳՀ Ներկայացուցիչ պրն.Թոմաս Բիրաթը բացման արարողությունում:

1998 թ. ՓԳԳՀ-ը Նորվեգիայի փախստականների խորհրդի եւ Հայաստանի կառավարության հետ համատեղ նախաձեռնեց բնակարանների շինարարություն այն փախստականների համար, ովքեր ապրում էին Ստեփանավանում ժամանակավոր կացարաններում: Հայաստանի կառավարությունը հանձն

52 ՓԱՒՍՏԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔՆԵՐ ԲՆԱԿԱՐԱՆ ՍՏԱՑԱՆ

առավ համապատասխան ենթակառուցվածքի շինարարությունը: Փախստականների համայնքին կոչ արվեց նույնպես մասնակցել այդ ծրագրի իրականացմանը որոշ շինարարական աշխատանքների իրականացմանը: Շինարարությունը իրագործվում էր ՓԳԳՀ-ի գործընկեր YMCA կազմակերպության միջոցով:

1999-ի նոյեմբերի 12-ին 52 փախստական ընտանիքներ Ստեփանավանում ստացան բնակարաններ: Հանդիսավոր բացմանը մասնակցեցին ՓԳԳՀ-ի ներկայացուցիչ Թոմաս Բիրաթը, ՓԳԳՀ-ի աշխատակազմը, Նորվեգիայի փախստականների խորհրդի ներկայացուցիչ Յան Վիլյունսենը, ՄԱԿ-ի եւ այլ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ եւ Հայաստանի պաշտոնատար անձինք:

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԾԵՐԵՐԻՆ

ՓԳԳՀ-ն, «Առաքելություն Հայաստան» կազմակերպության գործակցությամբ, իրականացրեց փախստականների շրջանում առավել անպաշտպան սոցիալական խավերի աջակցությանն ուղղված ծրագիր: Աջակցությունը հիմնականում ընդգրկում էր ծառայությունների մատուցում տնային պայմաններում, հոգեբանական ադապտացիա եւ այլն: 1997թ. նոյեմբերին ՓԳԳՀ ի եւ սոցալ նախարարության համատեղ անցկացրած ուսումնասիրության համաձայն, Երեւանի կոմու-

նալ կենտրոններում ապրող 33 հազար փախստականների ավելի քան 30 տոկոսը կազմում են ծերերը:

Ըստ ծրագրի, ՓԳԳՀ-ն «Առաքելություն Հայաստան» կազմակերպության հետ համատեղ աջակցություն է ցուցաբերել 8 հազար ծեր փախստականների, որոնք ապրում են Երեւանում:

Ծեր փախստականների կենսական պայմանները հարուցեցին ՄԱԿ-ի Փախստականների գերագույն հանձնակատար Սադակո Օգատայի լուրջ անհանգստությունը:

Նա մասնավորապես կոչ արեց ավելի մեծ ուշադրություն դարձնել ծեր փախստականներին եւ թեթևացնել նրանց հոգսերը:

Դրանից բացի, ՓԳԳՀ-ն «Առաքելություն Հայաստան» կազմակերպության միջոցով լրատվական քարոզարշավ է ծավալել՝ կոչ անելով օգնություն ցուցաբերել ծերերին: Այդ քարոզարշավը ներառում էր քննարկումներ, սեմինարներ, լուսանկարչական ցուցահանդեսներ, ինչպես նաեւ երեկոյթներ ծերերի համար:



ՆՈՐ ՎԵՐԱՆՈՐՈԳՎԱԾ ԴՊՐՈՑՆԵՐ

1999թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին ՄԱԶԾ «Ինտեգրացված օժանդակություն կայուն մարդկային զարգացմանը» ծրագիրը ավարտեց եւս երկու դպրոցների վերակառուցումը Շիրակի մարզի Բյուրակն (Գյուլիբուլաղ) եւ Սյունիքի մարզի Հարթաշեն գյուղերում:

Բյուրակն եւ Հարթաշեն գյուղերը գտնվում են սահմանամերձ գոտում, եւ ռազմական դիմակայությունը զգալի վնաս է հասցրել նրանց սոցիական համակարգին: Դրա հետեւանքով գյուղերում վտանգվել է երեխաների կրթության գործընթացը, որի ապահովման համար չկային անգամ տարրական պայմաններ: Բյուրակն գյուղում դասերն անցկացվում էին տեղական իշխանությունների կողմից տրամադրված ժամանակավորապես հարմարեցված կացարանում:

Նոր վերակառուցված դպրոցներն ունեն անկախ ջեռուցման համակարգ եւ ապահովված են բոլոր անհրաժեշտ ծառայություններով եւ հարմա-



րություններով, ներառյալ մարզային դահլիճը: Դպրոցներում՝ 1-ից 10-րդ դասարաններում, կսովորի ընդհանուր թվով 368 աշակերտ (218՝ Բյուրակնում եւ 150՝ Հարթաշենում):

Նոր վերակառուցված դպրոցների բացման արարողությունները տոն դարձան երկու գյուղերի բնակիչների համար, որոնք ազգագրական հանդեսով եւ աշակերտների ուժերով կազմակերպված համերգով նշեցին իրենց կյանքում տեղի ունեցած այս ուրախալի իրադարձությունը:

ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՋԱՐԳԱՑՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՋԵԿՈՒՅՑ 1999 (TDR 99)

ՄԱԿ-ի Առևտրի եւ զարգացման տարեկան զեկույցը պատրաստվում է ՄԱԿ-ի Առևտրի եւ զարգացման հանձնաժողովի (UNCTAD) կողմից: Յուրաքանչյուր տարի զեկույցը միաժամանակ ներկայացվում է ժնելում ՄԱԿ-ի Առևտրի եւ զարգացման հանձնաժողովի գերագույն քարտուղարի եւ մի շարք երկրներում հանձնաժողովի պաշտոնական ներկայացուցիչների կողմից: Պաշտոնական ներկայացումից անմիջապես հետո, աշխարհի խոշորագույն թերթերն ու ամսագրերը՝ Wall Street Journal, Financial Times, Independent, Economist, Business Week, Le Monde, Neue Züricher Zeitung եւ այլն, անդրադառնում են զեկույցին դրանից նյութեր եւ քաղվածքներ տպագրելով:

1999թ. Առևտրի եւ զարգացման զեկույցի հիմնական ուղերձներն են.

1. Սահմանափակ ելքը դեպի զարգացած երկրների շուկաները շարունակում է մնալ զարգացող եւ անցումային շրջանում գտնվող տնտեսությունների հիմնական խնդիրը:

2. Միջազգային ֆինանսական համակարգը բարեփոխումների կարիք ունի՝ զարգացող տնտեսություններում կրկնվող ճգնաժամերին համապատասխան կերպով արձագանքելու եւ դրանց հետեւանքները արագ վերացնելու նպատակով:

1999թ. Հայաստանը միացավ ՄԱԿ-ի Առևտրի եւ զարգացման զեկույցը պաշտոնապես ներկայացնող երկրների թվին: Ներկայացման արարողությունը տեղի ունեցավ 1999թ. սեպտեմբերի 23-ին Երեւանում, ՄԱԿ-ի շենքում եւ լայն արձագանք ստացավ տեղական մամուլում:

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

1999 թ. հոկտեմբերի 6 - 7-ը, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի շենքում անցկացվեց Մարդու իրավունքների ապահովման գործողությունների ազգային ծրագրի մշակմանը նվիրված ազգային սեմինար, որը կազմակերպվել էր ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գծով գերագույն հանձնակատարի գրասենյակի, ՀՀ արտաքին գործերի նախարարության եւ ՄԱԶԾ կողմից համատեղ իրականացվող «Մարդու իրավունքների ապահովման կարողությունների հզորացում» ծրագրի շրջանակներում:

Ազգային սեմինարին նախորդել էին մի շարք տեղական կլոր սեղաններ եւ քննարկումներ, որոնց ընթացքում քննարկվեցին եւ զնահատվեցին Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանության ներկա իրավիճակը, եւ գործողությունների ամբողջական ծրագրի մշակման եղանակներն ու հնարավորությունները:

Ազգային սեմինարին մասնակցեցին ՀՀ կառավարության, իրավապաշտպան ՀԿ-ների, միջազգային կազմակերպությունների մոտ 50 ներկայացուցիչներ, մարդու իրավունքների գծով միջազգային եւ ազգային փորձագետներ:



ՄԱԶԾ-ն ԵՎ «ՄԻՍԿՈ ՄԻՍԹԵՄՍ»-ը ՀԱՄԱԼՐՈՒՄ ԵՆ ՋԱՆՔԵՐԸ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆԸ ՎԵՐՋ ՏԱԼՈՒ ՀԱՄԱՐ

հազար մարդ, եւ միլիոնավոր մարդիկ ունկնդրում էին դրանց համաշխարհային համակարգչային համավեպի (www) միջոցով:

NetAid-ն արդեն ունեցել է մի շարք պատմական արդյունքներ:

Աշխարհի առաջնորդները, այդ թվում ԱՄՆ նախագահ Բիլ Կլինտոնը, Մեծ Բրիտանիայի վարչապետ Թոնի Բլերը, Հարավային Աֆրիկայի նախկին նախագահ Նելսոն Մանդելան, Ֆիլիպինների նախագահ Ջոզեֆ Եստրադան եւ Հարավային Կորեայի նախագահ Կիմ ղե Ջանգը առաջիններից էին, որ միացան ցանցակայքին (web site):

NetAid ցանցակայքը ծավալով ամենամեծն է աշխարհում: Այն ի վիճակի է բույնում մշակել 125 հազար հարցում եւ մեկ միլիոն մուտք, ինչը տասնապատիկ ավելի է բոլոր գոյություն ունեցող վեբ կայքերի (site) համեմատությամբ: Վեբ կայքը ստեղծվել է KPMG կողմից ընդամենը 90 օրվա ընթացքում, իսկ բովանդակությունը ապահովվում է Akamai կողմից, աշխարհի 90 վայրերում տեղադրված 1500 կայքաբաշխիչների (server) միջոցով: Հանդիսանալով պատմության մեջ էլեկտրոնային առևտրի ամենահզոր եւ ամենաարդյունավետ սարքերից մեկը՝ կայքը կարող է մեկ վայրկյանի ընթացքում ապահով կերպով մշակել 1000 էլեկտրոնային վճարում: NetAid հա-

մերգները պատմության մեջ ամենախոշոր հեռարձակումն են:

Աշխարհահռչակ կատարողների, պրոդյուսերների եւ դերասանների համագործակցությունը ապշեցրեց իր բազմազանությամբ եւ բազմակողմանիությամբ: Մասնակիցների թվում էին Բլեք Բրոուզը, Մերի Ջ. Բլայքը, Բուստարայնզը, Չեք Մամին, Շերիլ Բրոուն, Բաունթինգ Բրոուզը, Վիլյեմ Ջինը եւ Բոնոն, Ջյուելը, Ջիմմի Փեյջը, Փաֆ Դեյվիս, Ստինգը, Ջուլետտոն, Բրայան Ադամսը, Դեյվիդ Բոուիսը, Բուշը, Կատատոնիան, Դի Կոռզը, Յուրիսմիլիքսը, Ջորջ Մայքլը, Ստերեոֆոնիքսը, Ռոբի Վիլյամսը, Դեստրեն, Բրայան Ֆերին, Լեյդիսմիթ Բլեկ Մամբազոն, Մայքլ Կամենը եւ Օրքեստրան, Բվինսի Ջոնսը, Քեն Բրեյզանը, Դոն Միչչերը եւ Ջեֆ Փոլակը, որոնք միասին հանդես են եկել աշխարհի ամենահայտնի եւ մեծ լսարան ունեցող երաժշտական միջոցառումներին: Բեմում հայտնված դերասանների եւ դերասանուհիների թվում էին Մերիլ Ստրիփը, Մայքլ Դուգլասը, Բետրին Ջետա-Ջոնսը, Ալֆրեդ Վուդարդը եւ Դեյվիդ Բորենազը:

Յանցակայքի բովանդակության մշակմանը մասնակցեցին աղքատության ոլորտի լավագույն փորձագետներ, որոնք ներկայացնում էին ՄԱԿ-ի համակարգի եւ հասարակական զանգվածի 70 ամենաարդյու-

1999 թ. հոկտեմբերի 9-ին NetAid համաշխարհային համերգը ցնցեց աշխարհը: Նյու Յորքի Ջայընթս ստադիոնում, Լոնդոնի Ուեմբլիում, եւ ժնելի Ազգությունների պալատում միաժամանակ ելույթ ունեցող երաժիշտները արբանյակային կապի միջոցով միասին կատարեցին «Նոր Օր» երգը, որը հատուկ այս առիթի համար գրել էին Վիլյեմ Ջինը եւ Բոնոն:

NetAid-ը ՄԱԶԾ-ի եւ «ՄԻՍԿՈ Միսթեմս»-ի համատեղ նախաձեռնություն է, որն օգտագործում է Ինտերնետի ամսահամանափակ տեղեկատվական հնարավորությունները եւ հզորությունը աշխարհի տարբեր ծայրերում աղքատության մասին մարդկանց իրազեկությունը բարձրացնելու եւ աղքատության դեմ պայքարի համար միջազգային աջակցություն ապահովելու համար: ՄԱԶԾ-ի համար այս համերգները աննախադեպ հնարավորություն են ընձեռում աղքատության վերացման մասին ուղերձը միջազգային հանրությանը հաղորդելու եւ շուտ-քիզնեսի աշխարհահռչակ գործիչների մասնակցության շնորհիվ ուշադրություն գրավելու համար: Համերգներին մասնակցեց ավելի քան 100

նավետ կազմակերպությունները: Յանցակայքում տեղ գտած տվյալները հետագայում կմտնեն աղքատության վերացման Դեղին էջերի գրքի մեջ, որն ապագայում կդառնա աշխարհի բոլոր անկյուններում իրականացված ամենահաջող ծրագրերի շտեմարանը:

NetAid-ի միջոցով հավաքագրված բոլոր գումարները կտրամադրվեն աղքատության վերացման

ուղղված ծրագրերին NetAid հիմնադրամի միջոցով, որը կղեկավարվի աղքատության վերացման եւ մարդասիրական գործունեության նվիրյալների կողմից: Համերգներից ստացված շահույթը կօգտագործվի Կոսովոյում եւ Հարավային Աֆրիկայում ծայրահեղ չքավորության մեջ ապրողներին օգնություն տրամադրելու համար:

«ՄԻՄԿՈ Միսթենս»-ը ապահո-

վեց NetAid համերգի բոլոր ծախսերը եւ վճարեց մոտ 12 միլիոն ԱՄՆ դոլար ծրագրի իրականացման եւ շուկայահանման համար: Նա նաեւ հայտարարեց, որ կտրամադրի եւս 10 միլիոն ԱՄՆ դոլար NetAid հիմնադրամին: ՄԱԶԾ-ը ապահովեց ցանցակայքի ամբողջ բովանդակությունը եւ ստանձնեց դրա հետագա սպասարկումը:

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑՈ

1999թ. նոյեմբերի 30-ին տեղի ունեցավ մարդկային զարգացման ազգային զեկույցի պաշտոնական շնորհանդեսը՝ արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանյանի, Գլխավոր քարտուղարի օգնական, ՄԱԶԾ-ի ադմինիստրատիվ օգնական, ԱՊՀ երկրների ու Եվրոպայի բյուրոյի տարածաշրջանային տնօրեն Անտոն Կրուդերինկի եւ գիտությունների ազգային ակադեմիայի պրեզիդենտ Ֆադեյ Սարգսյանի մասնակցությամբ:


Այս տարվա «Մարդկային կայուն զարգացման հինգ տարին Հայաստանում» խորագիրը կրող զեկույցը Հայաստանում պատրաստված զեկույցների շարքում թվով հինգերորդն է եւ հորելյանականը: Զեկույցը, որ պատրաստվել է ազգային անկախ մի խումբ փորձագետների կողմից ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) եւ ՀՀ նախագահի աշխատակազմի՝ որպես գործադիր գործակալության, հովանավորությամբ, վերանայում է նախկինում Հայաստանում պատրաստված բոլոր զեկույցների հիմնական թեմաները եւ տալիս զարգացումների իր գնահատականը մարդկային կայուն զարգացման տեսանկյունից:

Զեկույցում փորձ է արվում գնահատել Հայաստանում անցումային շրջանի տեղադրությունը եւ բնույթը, բարեփոխումների սոցիալական գինը, աղքատությունը, հասարակության մեջ սոցիալական համագործակցու-

թյան եւ համերաշխության աստիճանը, պետության դերի եւ համագործակցության դինամիկան: Զեկույցն անդրադառնում է նաեւ Հայաստանի զարգացման հնարավոր հե-

ռանկարներին ամբողջական ներդրումների եւ տնտեսական զարգացման ռազմավարության լույսի ներքո: Չնայած բոլոր եզրահանգումները եւ առաջարկությունները հեղինակներինն են, ՄԱԶԾ-ն համոզված է, որ 1999թ. զեկույցն ակնհայտ կդարձնի Հայաստանում կայուն մարդկային զարգացումը խթանող քաղաքականություն մշակելու անհրաժեշտությունը:

Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիան պրն. Կրուդերինկին շնորհեց պատվավոր դոկտորի աստիճան՝ թվով 19-րդը, ընդգծելով նրա ներդրումները մարդկային զարգացման կոնցեպցիայի քարոզչության գործում:



ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՇՈՒԿԱՆԵՐՈՒՄ ԳՆՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՐԿԵՍԸ

1999 թ. հոկտեմբերի 25 - 29-ը ՄԱԶԾ-ի երեսնյան գրասենյակը հյուրընկալեց միջազգային շուկաներում գնումներ կատարելու գործընթացին նվիրված միջազգային սեմինար, որը կազմակերպվել էր ՄԱԶԾ-ի եւ ՄԱԿ-ի Գնումների միջգործակալական Գրասենյակի (IAPSO) կողմից: Ըստ կազմակերպիչների, Չայաստանի՝ որպես սեմինարի անցկացման վայրի, ընտրությունը պայմանավորված էր, ի թիվս այլ հանգամանքների, նաեւ ՄԱԶԾ-ի հայաստանյան գրասենյակի դրական իմիջով եւ հետաքրքրությամբ, որն այս համեմատաբար նոր գրասենյակը եւ ընդհանրապես երկիրը առաջացնում են ՄԱԶԾ-ում:


Սեմինարին մասնակցեցին կառավարությունների եւ ՄԱԶԾ գրասենյակների ներկայացուցիչներ Կորեայից, Քենիայից, Դրոզստանից, Սաուդյան Արաբիայից եւ Ուկրաինայից, ինչպես նաեւ Չայաստանում գործող ՄԱԿ-ի այլ գործակալությունների աշխատակիցներ: Սեմինարի ընթացքում քննարկվեց միջազգային շուկաներում գնումներ կատարելու հետ կապված հարցերի, խնդիրների, տարբերակների եւ առանձնահատկությունների ամբողջ փաթեթը: Դասընթացներն ընթանում էին գործնական եւ անմիջական մթնոլորտում,

դասախոսությունների, տեսական իրավիճակների վերլուծության, վարժությունների ուղեկցությամբ: Թեեւ սեմինարին շոշափված որոշ թեմաներ փոքր-ինչ տեսական բնույթ ունեին որոշ մասնակիցների համար, ձեռք բերած գիտելիքների եւ հմտությունների ամբողջությունը միանշանակ օգտակար կլինի արդյունավետ եւ մասնագիտական կերպով միջազգային շուկայում գնումներ կատարելու համար:



ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ



ՄԱԿ-ի ծրագրերը և օրգանները
Հատուկ գործակալություններ և այլ ինքնավար կազմակերպություններ համակարգի ներսում
Այլ կոմիտեներ և ad hoc և առնչվող մարմիններ

Աղբյուր: "Basic Facts about the United Nations" (NY, 1998) գրքից:



ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղար Քոֆի Անանի ուղերձը Տարեցների միջազգային օրվա/տարվա կապակցությամբ

20-րդ դարի ավարտի հետ միասին ավարտվում է նաև Տարեցների միջազգային տարին: Երկուսն էլ հարուստ էին իրադարձություններով: Այս դարն ակնատես եղավ մարդկանց կյանքի տեղափոխման անմախաղեղ աճին և հասարակության տարիքային կառուցվածքում տեղի ունեցած լուրջ փոփոխություններին: Այս տարվա ընթացքում շատ քայլեր են արվել՝ բարձրացնելու իրազեկությունն այս զարգացումների մասին, ցույց տալու, թե ինչպես կարելի է հարմարվել դրանց և նպաստելու, որպեսզի կարողանանք դրանք դիտել որպես

հնարավորություններ, որոնցից ավելի շատ պետք է կառչել, քան համարել բեռ, որը ստիպված ենք կրել:

Շարունակ աճող երկարակեցությունը մարդկությանն ապահովում է նոր մտավոր և ֆիզիկական հորիզոնի լայնացմամբ: Ներկայումս տարեց մարդիկ շատ առումներով առաջամարտիկներ են: Այս ոգով է, որ նրանք տարվա ընթացքում հանդես են եկել որպես շատ նորարարությունների նախաձեռնողներ, խթանողներ ու առաջնորդներ: Այդպիսով, նրանք իրենց հաջորդող տարեց մարդկանց շատ սերունդների համար ավելի ապահով, ավելի առողջ ու ավելի բարեկեցիկ կյանքի ուղի են հարթել:

Այս տարին նաև օգնել է կառուցել մի շարք կամուրջներ, որոնք մեզ հնարավորություն կտան առաջնորդվել «հասարակություն բոլոր տարիքների համար» մի հասարակություն, որտեղ տարբեր

տարիքային խմբեր ոչ միայն պարզապես կապրեն կողք կողքի, այլև միասին քաղաքացիություն կոչված «հաստատության» մաս կկազմեն: Քանի որ մենք ուրք ենք դնում նոր դարաշրջան ու նոր հազարամյակ, տարեցներին ու երիտասարդներին, անխտիր բոլորին կոչ է արվում համախմբվել հանուն ընդհանուր նպատակի, այն է՝ նպաստել արագորեն փոփոխվող աշխարհի ձեռնարկումներին ուղղված և ոչ մի օժանդակություն չի խափանվի տարիքային խտրականության պատճառով:

Ետևում թողնելով Տարեցների միջազգային տարին՝ եկեք մեզ հետ մյուս՝ բնակչության միջին տարիքի արագացող աճի դարաշրջան տանենք այն ամենը, ինչի շնորհիվ մենք հասկացանք այն հասարակության առավելությունները, որը հոգում է բոլորի մասին և հաշվի է նստում բոլորի հետ՝ անկախ տարիքից:


Տարեցների միջազգային տարվա տոնակատարությունը

ՓԳԳՀ-ը հովանավորեց միայնակ ծերերի համար ճաշկերույթ-համերգը Կամերային երաժշտության տանը, որը կազմակերպել էր «Առաքելություն Հայաստան» տեղական հասարակական կազմակերպությունը, որի խնդիրը միայնակ ծերերին օգնելն է: Հասարակական տեղեկատվության բաժինը օժանդակեց միջոցառման տեղեկատվության կազմակերպմանը: ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի՝ հատուկ այդ օրվան նվիրված ուղերձը ներկայացվեց ունկնդիրներին ՀՏԲ-ի տեղեկատվության օգնականի կողմից: Հայերեն թարգմանված որոշ տեղեկատվական նյութեր նույնպես բաժանվեցին մասնակիցներին:

«ՄԱԿ-ի շաբաթ» միջոցառումների շրջանակներում հոկտեմբերի 19-ին ՄԱԿ-ի շենքում լուսանկարների ցուցահանդես կազմակերպվեց՝ նվիրված Տարեցների միջազգային

տարվան: Յուցահանդեսը, որ հովանավորել էր ՓԳԳՀ-ը, կոչվում էր «Մի քեք ծերերին»: Հեղինակն անկախ ֆոտոլրագրող Գերման Ավագյանն է: Յուցադրված էին նաև ՄԱԿ-ի որոշ պրակտիկներ և տարվան նվիրված լրագր: Միջոցառումը կազմակերպել էին

«Համագործակցություն հանուն դեմոկրատիայի», «Առաքելություն Հայաստան» հասարակական կազմակերպությունները և Երևանի մամուլի ակումբը: Բացման խոսքում ՀՏԲ-ի ներկայացուցիչն ընդգծեց այս բնագավառում ՄԱԿ-ի նախաձեռնության կարևորությունը: Ելույթ ունեցան նաև Ազգային ժողովի ու սոցիալական ապահովության նախարարության համապատասխան բաժինների ներկայացուցիչներ: ՀՏԲ-ն հրապարակեց Գլխավոր քարտուղարի ուղերձը և այլ հարակից նյութեր: ՄԱԿ-ի նյութերի հատուկ ցուցահանդեսներ կազմակերպվեցին ՄԱԿ-ի գրադարանում և երկու դեպոզիտար գրադարաններում:





ՄԱԿ-ի մշտական համակարգող տիկ. Կատիցա Չեկալովիչը դիմում է հանդիսարանին:

ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղար Քոֆի Անանի ուղերձը

ՄԱԿ - ի օրվա կապակցությամբ

Այս տարի ՄԱԿ-ի օրը յուրահատուկ է: Աշխարհի բնակչությունը դարձավ 6 միլիարդ, եւ մենք էլ նոր հազարամյակի շեմին ենք:

Մի կողմից՝ սրանք զուտ թվեր են: Բայց խորհելու տեղիք են տալիս, ավելի են նշանավորում մարդկության պատմության նոր էջը: Մի էջ, որտեղ մենք, առավել քան երբեւէ, նույն ճակատագիրն ենք կրելու: Ժամանակն է հանրագումարի բերել, թե ինչ նվաճումներ ու ծախողումներ ենք ունեցել անցյալում: Պետք է առաջ նայել եւ մտածել, թե ինչպես նոր դարը նախորդից ավելի լավը դարձնենք:

Սոսկալի է, որ ճիշտ մեր կեսը՝ 6 միլիարդից 3 միլիարդը, ոտք է դնում նոր դարաշրջան ծայրահեղ աղքատության պայմաններում՝ օրական 3 դոլար կամ նվազ չափով ծախսով: Սա մի հարց է, որ մենք պետք է վերանայենք: Վրդվեցնող է նաեւ այն իրողությունը, որ այսօր շատ վայրերում մարդիկ ենթարկվում են բռնության ու ճնշման: 20-րդ դարն ամենաարյունահեղն է մարդկության պատմության մեջ: Մենք պետք է երաշխիք ունենանք, որ 21-րդ դարն առավել խաղաղ ու մարդասիրական կլինի: Անհանգստացնող է նաեւ այն հանգամանքը, որ աշխարհի կլիման փոփոխվում է այնպես, որ կարող է ոչնչացնել միլիոնավոր մարդկանց տներն ու ունեցածքը: Այս երեւոյթի վերահսկումն ու կառավարումը, թերեւս, մեր ամենահրատապ մարտահրավերն է լինելու:

Համայն աշխարհի մարդկությունն ակնկալում է, որ ՄԱԿ-ը կապաշտպանի իրենց քաղցից, հիվանդություններից, բռնությունից ու բնական աղետներից, եթե նույնիսկ անհնարին լինի ազգերի կամ տարածաշրջանների համար դրանց միայնակ դիմագրվելը: Բայց ՄԱԿ-ը նույնպես միայնակ ոչինչ չի կարող անել: Մեր հզորությունը մեր անդամ երկրների հավաքական ուժի մեջ է, համուն ընդհանուրի բարօրության նրանց համատեղ գործելու պատրաստակամության մեջ:

Մյուս տարի աշխարհի ղեկավարները կհանդիպեն Նյու Յորքում դարաշրջանի գագաթաժողովում: Նրանք կներկայանան դրանց դիմակայելու իրենց նախնական առաջարկներով եւ Միավորված ազգերի հնարավորությունների փաթեթով: Այդ ղեկավարները ներկայացնելու են ՄԱԿ-ի ժողովուրդներին: Չեզանից է կախված, որպեսզի նրանք ներկայանան այնպիսի որոշումներ կայացնելու հաստատակամությամբ, որոնք կապահովեն ավելի բարեկեցիկ կյանք մեր բոլորի եւ մեր երեխաների համար: Իմ հույսը դուք եք: Շնորհակալություն:

ՀԱՄԵՐԳ՝ ՆՎԻՐՎԱԾ ՄԱԿ-ի 54-րդ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ



ՄԱԿ-ի օրացույցում հոկտեմբերը տոնական միջոցառումների առումով ամենհարուստ ամիսն է: Այս տարի նույնպես մենք որոշեցինք որոշ օրացույցային միջոցառումներ կազմակերպել եւ առաջին հերթին բարձրացնել հանրության քաջատեղյակությունը ՄԱԿ-ի մասին: Այսպես կոչված, ՄԱԿ-ի շաբաթվա գլխավոր միջոցառումը բնականաբար ՄԱԿ-ի օրվա տոնակատարությունն էր, որի զագաթնակետը Կամերային երաժշտության տանը տեղի ունեցած համերգն էր: Համերգի հիմնական կատարողները Սայյաթ-Նովայի երաժշտական դպրոցի մանկական տրիոն էւ ջութակի նվագախումբն էին ու պատանիների «Տաթն» երգչախումբը:


Համերգարանի միջանցքում ՄԱԿ-ի պլակատները, ՄԱԿ-ի լոգոները եւ անդամ երկրների դրոշմներն էին ցուցադրված: ՄԱԿ-ի գործակալությունների գրքույկները, թերթիկներն ու բլյուստենները մատչելի դարձան շուրջ 400 հոգու:

ՄԱԿ-ի մշտական համակարգող տիկ. Կատիցա Չեկալովիչի հակիրճ խոսքից հետո ելույթով հանդես եկավ ԱԳՆ-ի միջազգային կազմակերպության ղեկավարած մանկական դեպարտամենտի ղեկավարը: Համերգի ժամանակ բաժանվեց ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղար Քոֆի Անանի ուղերձը՝ թարգմանված հայերեն եւ անգլերեն ու հայերեն մամուլ հարորդագրությունը: Ինչպես հայտնել էին Կենտրոնական գրասենյակից, Գլխավոր քարտուղարի նոր հազարամյակի ուղերձը պետք է հիմնվի ՄԱԿ-ի օրվան նվիրված այս հաստուկ հղման վրա:

Միջոցառումը շատ արդյունավետ կապ ստեղծեց գործակալությունների միջեւ:



ՀՏԲ WEB PAGE-ի ՇՆՈՐՀԱՆԴԵՍԸ



ՄԱԿ ՀՏԲ-ի ներկայացուցիչ պրն. Վաչերի Տկաչուկը ՀՏԲ-ի ցանցակայքը ներկայացնելիս:

Հոկտեմբերի 21-ին Հասարակական տեղեկատվության բաժինը հանդիսավորությամբ նշեց Ինտերնետի հասցեով իր երկրեզու ցանցակայքի (web page) շնորհանդեսը: Էջը ձևավորել է Արամ Ախեյանը: ՀՏԲ-ի ներկայացուցիչ պրն. Վաչերի Տկաչուկը ունկնդիրներին ներկայացրեց ցանցակայքի բովանդակությունը: Այն ունի հետևյալ բաժինները. ՄԱԿ-ի նյութեր, Հայաստանն ու ՄԱԿ-ը, ՄԱԿ-ի լրատու, ՀՏԲ-ի հրատարակություններ, մամուլ հաղորդագրություններ, գրադարան, միջոցառումներ, աշխատակազմ:

Պրն. Տկաչուկը խոսեց ցանցակայքի առաջին ու ամենահիմնական նպատակի մասին. այն է՝ ՄԱԿ-ի տեղեկատվության տարածում Հայաստանում: Շուտով էջն ավելի ծավալուն կդառնա՝ ներկայացվելով տարբեր լեզուներով: Տեղեկատվությունը պարբերաբար կթարմացվի, այնպես որ օգտվողները կգտնեն վերջնական ու թարմ նորություններ ՄԱԿ-ի մասին: Ընդհանուր առաջարկությունների



www.undpi.am էջի ձևավորող պրն. Արամ Ախեյանը:

մասնակիցների թվում էին զանգվածային լրատվության ներկայացուցիչներ, դպրոցների տնօրեններ, համալսարանի պրոֆեսորներ, ՄԱԿ-ի աշխատակազմը, կառավարության տեղեկատվական կենտրոնի անդամներ եւ այլն: Արարողության ընթացքում բաժանվեցին նորերս պատրաստված ՀՏԲ-ի տեղեկատվական թղթապանակներ.

Այսպես կոչված տեղեկատվական թղթապանակները պարունակում էին ա) մի թղթապանակ, բ) ՄԱԿ-ի համակարգի մի թերթիկ (հայերեն), գ) ՄԱԿ-ի հայաստանյան համակարգի մի թերթիկ (նույնպես հայերեն) գործակալությունների ղեկավարների անունների ցուցակով, դ) մի բացիկ, որի գլխագրում ցանցակայքի պատկերն է եւ ինտերնետի հասցեն ու հակիրճ տեղեկատվություն ՀՏԲ-ի մանդատի մասին (անգլերեն), ե) «Համառոտ ՄԱԿ-ի մասին» հայերեն գրքույկը:



Տեղեկատվության գծով օգնական տրիկ Արմինե Հալաչյանը շնորհանդեսի ժամանակ:

ԱՇԽԱՐՀԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ 1999Թ.

Հազարամյակի վերջին տարին նշանակալից է, քանզի 1999թ. հոկտեմբերի 12-ին մոլորակի բնակչությունը հասավ 6 միլիարդի: Վերջին տասնամյակների ընթացքում աշխարհի բնակչությունը աճում է աննախադեպ արագությամբ: Իր առաջին միլիարդին մարդկությունը հասավ 10,000 սերունդների ընթացքում եւ ընդամենը մեկ սերնդի ընթացքում ավելացավ եւս 4 միլիարդով: Այս աճը անդրադառնում է ամբողջ աշխարհի վրա՝ զգալիորեն ներգործելով սոցիալական վիճակի, տնտեսության եւ շրջակա միջավայրի վրա: Ազգաբնակչության, վերարտադրողական առողջության, մաշակող աշխատատեղերի, կրթության եւ տեղեկատվության մատչելիության խնդիրները երբեմն չեն եղել այնքան հրատապ, որքան այսօր են՝ նոր հազարամյակի շեմին:

6 միլիարդի օրը նշելու, հասարակության ուշադրությունը հրավիրելու, ինչպես նաեւ այս խնդիրների լուծման համար անհրաժեշտ ֆինանսական պաշարներ հավաքագրելու նպատակով Միավորված ազգերի բնակչության հիմնադրամը ֆինանսավորեց այս օրվան նվիրված բազմազան միջոցառումների շարքը, որոնք էին.

1.1999թ. հոկտեմբերի 5-ին վիճակագրության միջազգային օրը. Ստեփան Մնացականյանը եւ ՄԱԿ-ի Հասարակական տեղեկատվության բաժնի ներկայացուցիչ պրն. Վալերի Տկաչուկը ներկայացրեցին «Աշխարհի բնակչության նկարագիրը – 6 միլիարդ» տարեկան գեկույցը, որի ավելի քան 150 օրինակ բաժանվեց կառավարական հաստատություններին, արտասահմանյան երկրների ներկայացուցչություններին, դոնոր կազմակերպություններին, միջազգային եւ տեղական հասարակական կազմակերպություններին:


րին, ինչպես նաեւ զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներին:

2.Հոկտեմբերի 8-16-ը ՄԱԿ-ի շենքում կազմակերպվեց երեխաների նկարների ցուցահանդես, որին մասնակցում էին Հայաստանի գրեթե բոլոր մարզերի երեխաները: Նախապատրաստումը սկսվել էր ցուցահանդեսի բացումից դեռ 3 ամիս առաջ: Հանրապետության բոլոր մարզերի նկարչական կենտրոններում տրվեցին հայտարարություններ Բնակչության հիմնադրամի նկարների մրցույթի մասին, այնուհետեւ հավաքագրվեցին նկարները եւ ընտրվեցին հաղթողները, որոնք ստացան գեղարվեստի հրաշալի գրքեր եւ պատվոգրեր:

3.Նյու Յորքի Բնակչության հիմնադրամի կողմից պատրաստված 3 տեսահոլովակ, որոնք շոշափում են 6 միլիարդի, երիտասարդության եւ գեղեցիկ խնդիրները, թարգմանվեցին հայերեն: Հայկական նկարահանող խմբի կողմից պատրաստվեց 9 րոպե տևողությամբ ֆիլմ, որը ցուցադրվեց ազգային հեռուստատեսությամբ: Այս ֆիլմը եւ տեսահոլովակները բաժանվեցին 18 մարզային հեռուստաընկերությունների շրջաններում ցուցադրելու համար:

4.Հոկտեմբերի 15-ին Երեւանի Ազատության հրապարակում տեղի ունեցավ 4-ժամյա բացօթյա համերգ ժամանակակից երգիչների եւ շոու խմբերի մասնակցությամբ, որի ընթացքում բաժանվեց ավելի քան 2000 բրոշյուր՝ «Մենք 6 միլիարդ ենք» խորագրով:

5.Հոկտեմբերի 12-ին Բնակչության հիմնադրամը եւ Գյումրիի «Մեղվիկ» մանկապատանեկան ուսուցման կենտրոնը համատեղ կազմակերպեցին 6 միլիարդի օրվան նվիրված մի շարք միջոցառումներ:



ներ: Կենտրոնի երեխաները այցելեցին Գյումրիի ծննդատունը, որտեղ նվերներ հանձնեցին 10 մայրերի, այնուհետեւ շքերթով անցան քաղաքի փողոցներով դեպի «Մեղվիկ» կենտրոնը, որտեղ տեղի ունեցավ շոու-համերգ երիտասարդների եւ մանուկների մասնակցությամբ:

Երիտասարդ բժիշկների գիտական ասոցիացիան, Երիտասարդ ժողովրդավարների միությունը, «Նոր դար» «A-A-Kronos» եւ «Մեղվիկ» հասարակական կազմակերպությունները գերազանց աշխատանք կատարեցին վերոհիշյալ միջոցառումները Բնակչության հիմնադրամի հայաստանյան գրասենյակի հետ կազմակերպելիս: Նրանց համար հիանալի խրախույս էին երեխաների, պատանիների եւ նրանց ծնողների երջանիկ դեմքերը, որոնց կրկին հնարավորություն տրվեց սովորել, իրազեկ դառնալ եւ մասնակցել միջոցառումներին՝ համեմելով այս ամենը խինդով ու զվարճությամբ:

ՄԱԿ-Ի ՏՈՆԱՑՈՒՅՑ

ՀՈԿՏԵՄԲԵՐ - ՆՈՅԵՄԲԵՐ - ԴԵԿՏԵՄԲԵՐ

- Հոկտեմբեր 1
- Հոկտեմբերի 1-ին երկուշաբթի
- Հոկտեմբեր 9
- Հոկտեմբերի 2-րդ չորեքշաբթի
- Հոկտեմբեր 16
- Հոկտեմբեր 17
- Հոկտեմբեր 24
- Հոկտեմբեր 24

- Տարեցների միջազգային օր
- Համաշխարհային բնակեցման (Habitat) օր
- Համաշխարհային փոստի օր
- Բնական աղետների նվազեցման միջազգային օր
- Համաշխարհային պարենի օր
- Աղքատության վերացման միջազգային օր
- Միավորված ազգերի կազմակերպության օր
- Համաշխարհային զարգացման տեղեկատվության օր

- Նոյեմբեր 16
- Նոյեմբեր 20
- Նոյեմբեր 21

- Հանդուրժողականության միջազգային օր
- Երեխաների համընդհանուր օր
- Համաշխարհային հեռուստատեսության օր

- Դեկտեմբեր 1
- Դեկտեմբեր 3
- Դեկտեմբեր 5
- Դեկտեմբեր 7
- Դեկտեմբեր 10

- Համաշխարհային ՁԻԱՅ-ի օր
- Հաշմանդամների միջազգային օր
- Տնտեսական եւ սոցիալական զարգացման կամավորների միջազգային օր
- Քաղաքացիական ավիացիայի միջազգային օր
- Սարդու իրավունքների օր



«ԿՅԱՆՔԻ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԱՌԱՐԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

Ժողովրդավարական եւ ազատ շուկայական տնտեսության պայմաններում ապրել, առողջ ընտրություններ կայացնել եւ հակասություններ լուծել սովորելու համար երեխաներին ավելի լավ նախապատրաստելու նպատակով ՅՈՒՆԻՍԵՖ-ի Հայաստանի գրասենյակը օժանդակում է կրթության եւ գիտության նախարարությանը՝ «Կյանքի հմտություններ» առարկան ընդգրկելու դպրոցական ուսումնական ծրագրում: Նախքան ծրագրի ավարտը այս նոր դասընթացն ուսուցանված կլինի Հայաստանի 1420-ից ավելի դպրոցներում՝ կիրառելով ակտիվ ուսուցման մեթոդներ, որոնք եւս ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ նոր են ներմուծվում Հայաստանում:

1999/2000 ուսումնական տարում սկսվել է «Կյանքի հմտությունների» ուսուցումը 16 փորձ-

նական դպրոցներում: Ծրագիրը բաղկացած է նոր ժողովրդավարական հասարակությունում աճող անհատի համար կենսական նշանակություն ունեցող թեմաներից, օրինակ, «Անհատը եւ նրա հարաբերությունները», «Համայնք եւ հասարակություն», «Ազգ եւ պետություն», «Մարդու իրավունքներ եւ պարտականություններ», «Մեռալին եւ ցեղալին հավասարություն», «Հակասությունների կառավարում», «ԶԻԱՀ/ՄԻԱՎ-ի մասին իրազեկություն», «Նախապատրաստություն աղետին» եւ այլն, ներառում է այնպիսի առանցքային կարողությունների զարգացում, ինչպիսիք են ինքնագիտակցությունը, ինքնագնահատումը, գործակցությունը, քննադատական մտածողությունը եւ որոշումներ կայացնելը:

ՊԱՅՔԱՐ ՅՈՂԱՅԻՆ ԱՆԲԱՎԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ ԳՅԱՍՏԱՆՈՒՄ

1999թ. օգոստոսի 31-ին առողջապահության նախարարությունը եւ ՅՈՒՆԻՍԵՖ-ը կազմակերպեցին տարբեր նախարարությունների համատեղ քննարկում աղի հանընդհանուր յոդացման եւ յոդային անբավարարության հետեւանքով առաջացող խանգարումների վերացման վերաբերյալ: Հանդիպման ընթացքում մշակվեցին գործողությունների ազգային պլան, առաջարկություններ տեղական արտադրության աղի յոդացման ոլորտում գոյություն ունեցող կանոնների եւ կանոնակարգումների կատարելագործման ուղղությամբ:

Հայաստանում աղ արտադրող միակ ձեռնարկությունը՝ Երեւանի աղի գործարանը, 1997թ. սկսած արտադրել է յոդացված աղ, այն բանից հետո, երբ ՅՈՒՆԻՍԵՖ-ը գործարանին տրամադրեց աղի յոդացման հոսքագիծ: Շուկայում աղի հսկողության եղանակների կատարելագործման նպատակով ՅՈՒՆԻՍԵՖ-ն աջակցել է կրթության նախարարությանը՝ 1999թ. սեպտեմբերին անցկացնելու հանրապետական ուսումնական պարապմունքներ 280 բուժաշխատողների համար յոդային անբավարարության հետեւանքով առաջացող խանգարումների վերացման եւ աղի հանընդհանուր յոդացման վերաբերյալ:

Կանայք անցումային շրջանում: Տարածաշրջանային մոնիտորինգ

Սեպտեմբերի 27-ին ՅՈՒՆԻՍԵՖ-ի Հայաստանի գրասենյակը կազմակերպեց մամուլի ասուլիս՝ ներկայացնելով տարածաշրջանային վերահսկման (մոնիտորինգի) թիվ 6 զեկույցը՝ «Կանայք անցումային հասարակություններում», որը պատրաստել է ՅՈՒՆԻՍԵՖ-ի Ինոկենտի հետազոտական կենտրոնը Կենտրոնական եւ Արեւելյան Եվրոպայի, ԱՊՀ եւ մերձբալթյան երկրներում ՅՈՒՆԻՍԵՖ-ի գրասենյակների գործակցությամբ: Զեկույցի միջազգային թողարկումը տեղի ունեցավ սեպտեմբերի 22-ին, Ժնևում: Հրատարակումը տրամադրում է կանանց իրավիճակի առաջին համակողմանի գնահատումը Կենտրոնական եւ Արեւելյան Եվրոպայում, Անկախ պետությունների համագործակցության եւ մերձբալթյան երկրներում՝ 1989թ. Բեռլինի պատի անկումից ի վեր: Զեկույցը թողարկվեց ՄԱԿ-ի Կանանց դեմ խտրականության բոլոր ձեւերի վերացման մասին կոնվենցիայի 20-րդ տարեդարձի օրը: Կոնվենցիան վավերացվել է տարածաշրջանի բոլոր 27 երկրների, այդ թվում եւ Հայաստանի կողմից:



ԵՐԵՒԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄ

Նախագիծ, որն ի մի է բերում հայ եւ վրաց պատանիներին



ՅՈՒՆԻՍԵՖ-ը աջակցում է Համահայկական կանանց միության ծրագրին, որի նպատակն է բարձրացնել երիտասարդության քաջատեղակությունը Երեխայի իրավունքների կոնվենցիայի, ՅՈՒՆԻՍԵՖ-ի եւ ՄԱԿ-ի այլ գործակալությունների դերի մասին, որոնք առաջ են քաշում երեխանե-

րին առնչվող թեմաներ: Այս համազգային ծրագիրը, որն իրագործվել է Երեւանում, Գորիսում, Վանաձորում, Գյումրիում, Իջևանում ու Եղեգնաձորում, օգնել է 14-17 տարեկան պատանիների գործակցել ըստ համայնքների կազմած ծրագրերին իրականացնելու համար ՄԱԿ-ի մոդել գործակալությունների միջոցառումները մասնաճյուղերում: Այլ ձեռնարկումների շարքում, որոնք ներառում են թիվ կազմելու վարժությունը, ՄԱԿ-ի բոլոր գործակալությունների խորհրդատուների օժանդակությամբ նպատակաուղղված հասնումարներն ու ուսուցման ծրագրերը ԵԻԿ-ի ընթացակարգի նախապատրաստման ու իրականացման վերաբերյալ, ծրագիրը նախատեսում է ամառային դպրոց հայ եւ վրացի պատանիների համար: Ծրագրի բարձրակետը դարձավ երեխաների գազաթաժողովը, որը կայացավ նոյեմբերի 20-ին Հայաստանի ու Վրաստանի 100 պատանիների մասնակցությամբ: Գազաթաժողովին, որը տեղի է ունեցել Հայֆիլհարմոնիայի փոքր դահլիճում, մասնակցում էին ՄԱԿ-ի գործակալությունների, դիվանագիտական կորպուսի եւ այլ հաստատությունների ներկայացուցիչներ:

ՄԱԿ-ի լրատու #2, 1999

ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Որպես շնչառական ուղիների սուր վարակիչ հիվանդությունների և փորլուծության դեմ պայքարի ծրագրի մաս՝ ՅՈՒՆԻՍԵՖ-ն աջակցեց առողջապահության նախարարությանը՝ անցկացնելու պարապմունքներ բժշկական ուսումնական հաստատություններում դասավանդողների համար: Պարապմունքների նպատակն էր ներկայացնել փոքրահասակ երեխաներին շնչառական ուղիների սուր վարակիչ հիվանդություններից և փորլուծությունից բուժելու ԱՀԿ/ՅՈՒՆԻՍԵՖ-ի մեթոդները և մոդուլները, ինչպես նաև նախատեսել գործողություններ շնչառական ուղիների սուր վարակիչ հիվանդությունների և փորլուծության դեմ պայքարի ծրագրի կատարելագործման և ուսումնական ծրագրում համակողմանի ներմուծման համար: Ուսուցմանը ներգրավված էին 129 մասնակիցներ Երևանի բժշկական համալսարանից, Երևանի պետական բազային բժշկական ուսումնարանից և Առողջապահության ազգային ինստիտուտից:



ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՌԱՅ ՊՈԼԻՈՍԻԵԼԻՏԻ

Հոկտեմբերի 11-16-ը Հայաստանում անցկացվեցին ինունականխարգելման ազգային օրեր (ԻԱՕ) ընդդեմ պոլիոմիելիտի: Մայրերին խրախուսելու համար, որպեսզի իրենց երեխաներին բերեն պատվաստումների, ՅՈՒՆԻՍԵՖ-ն աջակցեց Առողջապահության նախարարությանը՝ թողարկելու պոլիոմիելիտի վերաբերյալ երկու տեսահոլովակ (անցյալ տարի Rotary International-ի հետ համատեղ թողարկված հոլովակի թարմացված տարբերակը և մի նոր հոլովակ պոլիոմիելիտի կանխարգելման և սահմանված կարգով անցկացվող ինունականխարգելման ժամանակացույցի վերաբերյալ): Հոլովակները ցուցադրվեցին հայկական ազգային հեռուստատեսության առաջին ալիքով՝ հանրապետական ընդգրկմամբ: Այս տարի ՅՈՒՆԻՍԵՖ-ը տրամադրեց պոլիոմիելիտի պատվաստանյութեր Ատլանտայի հիվանդությունների կանխարգելման կենտրոնի օժանդակության շնորհիվ:

ՀԵՊԱՏԻՏԸ 2-Ը ԿՆԱՀԱՆՁԻ

1999թ. Հայաստանի առողջապահության նախարարությունը ազգային ինունականխարգելման ժամանակացույց ներմուծեց նորածինների ինունականխարգելումը Բ հեպատիտի դեմ: Այս վտանգավոր հիվանդության դեմ պատվաստումներ կատարելու նպատակով ՅՈՒՆԻՍԵՖ-ը ձեռք էր բերել Բ հեպատիտի 110 000 դեղաքանակ: Ի լրումն, ՅՈՒՆԻՍԵՖ-ը կազմակերպեց նաև Բ հեպատիտի ինունականխարգելմանը նվիրված ուսուցողական սեմինար պարապմունք: Ուսուցումը տեղի ունեցավ հոկտեմբերի 6-8-ը, Երևանում, 150-ից ավելի բուժաշխատողների՝ Հայաստանի բոլոր մարզերից ժամանած մանկաբույժների և համաճարակաբանների մասնակցությամբ: ՅՈՒՆԻՍԵՖ-ն օժանդակեց նաև մայրերի համար 100 հազար օրինակ թերթիկների տպագրությանը ընդլայնելու համար հիվանդության վտանգների մասին տեղյակությունը: Թերթիկները բաժանվեցին մինչև սեպտեմբերի վերջը առաջնային առողջապահական հիմնարկների և ծննդատների միջոցով:



ԱՀԿ-Ը ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

ԱՀԿ-ն շարունակում է իր աշխատանքը երկրում բազմազանի համար մշակված ԱՀԿ ռազմավարության վեց գերակայությունների (տես ՄԱԿ-ի Լրատու, ամառ, 1999թ): ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԶԱՂԱԶԱԿԱՆՈՒԹՅԱՆ ոլորտում ԱՀԿ-ի եվրոպական տարածաշրջանային գրասենյակը (ԵՏԳ), համագործակցելով Նորվեգիայի կառավարության հետ, նախաձեռնեց «Հանրային առողջապահության խորհրդակցական (ՀԱԽ) Անդրկովկասի հանրապետություններին՝ Հայաստանին և Վրաստանին» ծրագիրը: 1996թ. Գեկտեմբերին Երևանում հիմնվեց ՀԱԽ-ի գրասենյակը՝ երկու աշխատակցով: 1996-1998թթ. ընթացքում գրասենյակն աշխատում էր ամրապնդել համապատասխան ղեկավար աշխատակիցների և ազգային փորձագետների հմտությունները միջազգային փորձի գնահատման և տեղայնացման հարցերում, աջակցում էր հանրային առողջապահության բարեփոխումներին, ներառյալ երկարաժամկետ քաղաքականության մշակումը: Հատուկ կարեւորություն է տրվել Առողջության առաջնային պահպանմանը (ԱԱՊ), և Հայաստանի առողջապահության նախարարության փորձագիտական խմբերին ցուցաբերվել է խորհրդատվական աջակցություն

ԱԱՊ և առողջապահության ֆինանսավորման ռազմավարությունների մշակման հարցում: 1998թ. վերջում՝ մինչև ծրագրին հատկացված գումարների սպառվելը, ներկայացվեց Առողջության պահպանման ազգային քաղաքականության ծրագրի ուրվագիծը: 1999թ. ԱՀԿ ԵՏԳ-ն հավելյալ գումարներ հատկացրեց Հայաստանի առողջապահության նախարարությանը ծրագրի լրամշակման համար, փետրվարին և մարտին կայացան խորհրդակցություններ-սեմինարներ, Հայաստան այցելեց ԵՏԳ պատվիրակությունը՝ ԱՀԿ ԵՏ տնօրեն, դոկտոր Ջ. Ասվալի գլխավորությամբ՝ մասնակցելու առողջության պահպանման քաղաքականությանը նվիրված բարձրատիճան կոնֆերանսին (7 մայիս, 1999թ.): Այդ կոնֆերանսում ներկայացվեց Առողջության պահպանման ազգային քաղաքականության ծրագրի առաջին նախագիծը: Դոկտոր Ասվալը հանդիպումներ ունեցավ Հայաստանի Հանրապետության նախագահ այրն. Ռ. Քոչարյանի և վարչապետ այրն. Ա. Գաբրիելյանի հետ: ԱՀԿ-ի աջակցությունը Հայաստանին առողջության ամրապնդման ոլորտում արժանացավ բարձր գնահատականի, և քաղաքականության փաստաթղթի նախագիծը ստացավ երկրի բարձրաս-

տիճան ղեկավարության, այլ նախարարությունների և բժշկական հասարակայնության հավանությանը: Կոնֆերանսին մեծ աջակցություն ցուցաբերեցին տիկին Կ. Չեկալովիչը՝ ՄԱԿ-ի մշտական համակարգողը Հայաստանում, ինչպես նաև ՄԱԿ-ի Ջարգացման ծրագրի և ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի գրասենյակները: Հայաստանում ԱՀԿ կապերի և համակարգման գրասենյակը Առողջության պահպանման ազգային քաղաքականության ծրագրի մշակմանը բազմակողմանի աջակցություն ցուցաբերելու հետ մեկտեղ ապահովեց մայիսյան կոնֆերանսը հետևյալ հիմնական փաստաթղթերով. «Առողջապահության համակարգը անցումային շրջանում», «Շրջակա միջավայրի հիգիենայի գործողությունների ազգային պլանը», «Կանանց առողջության ուրվագիծը»:

1999թ. հունիսին ԱՀԿ ԵՏԳ-ն անցկացրեց առողջության պահպանման ազգային քաղաքականության ծրագրի երկրորդ նախագծային փաստաթղթի խոր տեխնիկական փորձաքննությունը: Ներկայումս առողջապահության նախարարությունը ավարտում է քաղաքականության փաստաթղթի երրորդ տարբերակի մշակման աշխատանքները:

ԱՀԿ-ն կարողանալի իր տեխնիկական աջակցությունը առողջության պահպանման քաղաքականության մշակման գործընթացին, հատկապես պլանավորման, իրականացման (Գլխավոր պլան) և առողջապահության օրենսդրության մշակման ոլորտներում:



ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՏԵՎԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՈՒ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Գործադիր հանձնաժողովը 1999թ. հոկտեմբերին կայացած իր երրորդ հերթական նստաշրջանում հաստատեց «Հայաստանում տեսական օգնության ու վերականգնման գործողություն» ծրագիրը:

9 971 115 ԱՄՆ դոլարի արժեքով «Տեսական օգնության ու վերականգնման գործողություն» (ՏՕՎԳ) ծրագիրն ընդգրկելու է 2000 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածը: Ծրագրից կօգտվի 170 հազար նպաստառու՝ փախստականներ եւ կարիքավոր խմբեր:

Պարենի համաշխարհային ծրագիրը (ՊՀԾ) Հայաստանում իր գործունեության լիակատար դադարեցումը կանխատեսում է մինչև 2002 թվականը՝ օգնության աստիճանական կրճատման ձեռով, ենթադրելով, որ մինչ այդ Հայաստանի տնտեսությունն այնքան կվերականգնվի, որ հնարավոր կլինի հիմնական սոցիալական ապահովության ցանց ստեղծել երկրի կարիքավոր բնակչության համար: Քանի որ այդ առաջընթացը ընկճելու է ամեն տարի, ՏՕՎԳ-ն սկզբնական շրջանի համար հաստատվել է առաջիկա 1 տարվա համար:

ՊՀԾ-ի խնդիրները նախատեսվել են կառավարության եւ այլ գործընկերների հետ խորհրդակցությամբ: Օժանդակության ընդհանուր խնդիրներն են՝

- ❑ բարելավել կարիքավորների, այդ թվում փախստականների ու երկրի ներսում տեղահանվածների սննդային վիճակը՝ հիմնական շեշտը դնելով կանանց ու երեխաների կարիքների վրա:
- ❑ բարելավել սոցիալապես անապահով մարդկանց առողջությունն ու կենսապայմանները սոցիալական ենթակառույցի վերականգնման միջոցով:
- ❑ ունեզուրկ եւ քաղցած մարդկանց շրջանում նպաստել վերականգնման գործընթացին գյուղական ենթակառույցի վերականգնման միջոցով, որը կխթանի սննդի արտադրությունը եւ մարդկանց ինքնուրույնությունը,
- ❑ նպաստել փախստականների ինքնուրույն գոյությանը եւ խրախուսել փախստականների հարցերի հեռանկարային լուծումները:

ՊՀԾ-ն կշարունակի աշխատել կառավարության Մարդասիրական օգնության կենտրոնական հանձնաժողովի, սոցիալական ապահովության նախարարության եւ ՄԱԿ-ի բույր գործակալությունների հետ: ՏՕՎԳ-ի շրջանում ՊՀԾ-ն սնունդ ուղղակիորեն կբաշխի նպաստառուներին՝ հիմնվելով կարիքավորության գնահատման կառավարության ՓԱՐՈՍ համակարգի տրամադրած նպաստառուների ցուցակների վրա: ՊՀԾ-ն սնունդ կտրամադրի նաեւ հասցեագիր նպաստառու խմբերին եւ «Սնունդ աշխատանքի դիմաց» ծրագրի մասնակիցներին:

Անցած 5 տարիների ընթացքում ՊՀԾ-ի աշխատակազմը դարձել է բավական փորձառու: ՊՀԾ-ն ծրագրեր է իրականացնում ամբողջ երկրում՝ Երեւանի գրասենյակի եւ Վանաձորի ու Գորիսի աշխատողների միջոցով: Իր աշխատակազմով ՊՀԾ-ն կատարում է կարիքների կանոնավոր ու արդյունավետ գնահատում, առաքում է սնունդ, իրականացնում է դիտորդական այցելություններ եւ կորոլիմացում:

ՄՆՈՒՆԴ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԴԻՄԱՅ - 1999թ.

Գործազրկությունը աղքատության հիմնական պատճառներից է: Գործազուրկների թիվն արագորեն ավելանում է նախկինում Ռուսաստանի Դաշնությունում աշխատող հայերի գանգվածային վերադարձի հետեւանքով:

Պարենի համաշխարհային ծրագիրն (ՊՀԾ) օգտագործում է աղքատ մարդկանց աշխատուժը՝ նրանց տալով աշխատանք ու եկամուտ, ինչպես նաեւ կայուն զարգացման անհրաժեշտ ենթակառույց ստեղծելու հնարավորություն: ՊՀԾ-ն փոքր չափի համայնքային սնունդ աշխատանքի դիմաց (ՄԱԳ) ծրագիրը Հայաստան ներմուծեց 1999 թվականին, որպեսզի մեղմի կառուցվածքային բարեփոխումների եւ շուկայական տնտեսության անցման անբարենպաստ ազդեցությունը:

1995-ից մինչև 1999-ի նոյեմբերն իր «Սնունդ աշխատանքի դիմաց» ծրագրով ՊՀԾ-ն օգտագործել է 11812 տոննա պարեն՝ տարբեր ոլորտներում ստեղծելով շուրջ 5 միլիոն 950 հազար աշխատանքային օր աշխատունակ, բայց գործազուրկ ու մասամբ գործազուրկ մարդկանց համար:

1999թ. ՊՀԾ-ն շարունակեց ավելացնել վերականգնման ուղղված ջանքերը ՄԱԳ ծրագրերի միջոցով, կիրառելով առաջիկա մի քանի տարիների ընթացքում օգնության ծրագրերն աստիճանաբար դադարեցնելու ռազմավարություն: ՄԱԳ-ը ճանաչվել է որպես պարենի անվճար բաշխումից դեպի զարգացում անցնելու հարմար միջոց, որն առաջիկայում մեծ պոտենցիալ ունի: ՄԱԳ-ն իսկապես նպաստել է մասնակիցների սոցիալական ու տնտեսական

պայմանների բարելավմանը, միաժամանակ տեղական մակարդակում օգնել է իշխանություններին հանդես գալ դժվարությունների լուծման նախաձեռնություններով:

ՄԱԳ աշխատանքներն առաջին հերթին նպատակաւորված են ընտանիքների պարենային ապահովության բարձրացմանը եւ գյուղական ու քաղաքային ենթակառույցի վերականգնմանը հետեւյալ միջոցներով. ոռոգման ջրանցքների, խողովակաշարերի կառուցում եւ նորոգում, վարելահողերի, այգիների, անտառների ու խաղողի այգիների վերականգնում ու հիմնում, սննդի վերամշակման արտադրամասերի կառուցում, խմելու ջրի եւ կոյուղիների նորոգում եւ կառուցում, տների շինարարություն ու նորոգում փախստականների եւ երկրաշարժից տուժածների համար, հանրային շենքերի՝ դպրոցների, մանկապարտեզների, հիվանդանոցների կառուցում եւ նորոգում, հանրային տարածքների վերականգնում քաղաքներում:

1999թ. սկզբից ի վեր ՊՀԾ-ն հավանության է արժանացրել 360 ՄԱԳ ծրագրի, ստեղծելով ավելի քան 2.5 միլիոն աշխատանքային օր: Դրանցից 220-ը իրականացվել են ՊՀԾ-ի սննդի արտակարգ բաշխման ծրագրի օրոք՝ 3900 տոննա սննդամթերքի օգտագործումով: Ընթացիկ վեցամսյա «Տեսական օգնության ու վերականգնման օպերացիա»

ծրագրի օրոք հավանության է արժանացել 140 ծրագիր, որոնց իրականացման համար ՊՀԾ-ն տրամադրում է 1900 տոննա սնունդ: Կանանց ընդհանուր մասնակցությունը 1999թ. ՄԱԳ- ծրագրին կազմում է 26 տոկոս:

ՄԱԳ-ը կիրարկվում է ինքնահասցեագրման մեխանիզմով՝ գրավելով ամենակարիքավորներին, քանի որ աշխատանքի հատուցման չափն անհրապույր է սովորական աշխատանքային շուկայում աշխատանք փնտրողների համար:

ՊՀԾ հայաստանյան գրասենյակի ծրագրերի բաժինը նախատեսում է իր հերթական տարեկան ՄԱԳ-ի սեմինարներն անցկացնել ղեկտեմքերին, հրավիրելով կառավարության, կիրարկող գործընկերների, տեղական իշխանությունների, Միավորված ազգերի կազմակերպության ու հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Սեմինարների անցկացման նպատակը Հայաստանում ՄԱԳ-ի ծրագրերի հետագա խթանումն է: Մասնակիցները կքննարկեն ՄԱԳ-ի ծրագրերի ղեկավարման, քա-



ՄԱԳ-ի շրջանակներում ծառայուն կանաչորում

ղաքային ու գյուղական վերականգնման, եկամտների ստեղծման ու կանանց մասնակցության հարցեր: Կվերանայվի անցած տարիների ՄԱԳ-փորձը, կքննարկվեն 2000 թվականին կորոնիացված գործողությունների ծրագիր կիրարկելու միջոցներն ու

հնարավորությունները: Ավանդական դարձած այս տարեկան ՄԱԳ- սեմինարները, ի թիվս այլ ձեռնարկումների, նպաստում են, որ ՄԱԳ- աշխատանքները համապատասխանեն կառավարության վերականգնման նպատակներին:



Միգրացիայի կառավարման ոլորտում կադրային բազայի ամրապնդում

Միգրացիայի միջազգային կազմակերպության (ՄՄԿ) կողմից պատրաստված զեկույցը, որ վերնագրված էր “Միգրացիոն կառույցի ստեղծումը. առաջարկներ”, մեծապես օգտակար է եղել ՀՀ կառավարությանն առընթեր միգրացիայի և փախստականների նորաստեղծ վարչության (ՄՓՎ) կանոնադրության և աշխատանքային ուղղությունների մշակման ընթացքում: ՄՄԿ-ն այժմ կօժանդակի ՄՓՎ-ին ազգային միգրացիոն քաղաքականության կոնցեպցիայի մշակման, միգրացիոն օրենսդրության և գործող ծրագրերի ներդաշնակեցման խնդրում: Որպես վերջինիս օրինակ կարող է ծառայել սահմանային կառավարման ծրագիրը: Կառավարությանը կից այնպիսի կառույցի ստեղծումը, որն իրավասու է մշակել միացյալ կամ ազգային միգրացիոն քաղաքականություն և համակարգել դրա իրականացումը, ինչպես նաև վարչության նոր, եռանդուն պետի նշանակումը, մեծ առաջընթաց է:

Անդրկովկասի երեք հանրապետությունների ՄՄԿ առաքելությունների ղեկավարները և տեղական ծրագրերի պատասխանատուները հանդիպեցին Թբիլիսիում՝ տեղեկատվություն փոխանակելու արվածի մասին, ծրագրելու և համաձայնեցնելու հետագա անելիքներն ու համատեղ աշխատանքները:

Միգրացիոն ոլորտի ՀԿ-ների զարգացման ծրագիր

Հայկական սոցիոլոգիական ասոցիացիայի (ՀՍԱ) հասարակական կազմակերպությունների (ՀԿ) տեղեկատվական կենտրոնը սկսել է ինտերնետային կապի հնարավորություններ տրամադրել միգրացիոն ոլորտի տեղական ՀԿ-ներին: Լույս ընծայվեց “Միգրացիոն սեկտորի նորություններ” պարբերականի հինգերորդ համարը: Որպես ԱՊՀ կոնֆերանսի աշխատանքի արդյունք՝ ԱՊՀ մի շարք երկրների ՀԿ-երի կողմից ստեղծվեց “Միջազգային ոչ կառավարական համագործակցություն միգրացիայի ոլորտում” կազմակերպությունը: ՀՍԱ-ն հիմնադիր անդամ է:

Տեղեկատվական կենտրոնը կազմակերպել է հետեյալ սեմինարներն ու վերապատրաստման դասընթացները, որոնց մասնակցել են միգրացիոն սեկտորի տեղական ՀԿ-ները.

- ՀԿ-ների դերը ԱՊՀ կոնֆերանսի գործընթացում
- Միջազգային կազմակերպությունները և միգրացիոն սեկտորի ՀԿ-ները
- ՀԿ-ներին առնչվող օրենսդրություն և գրանցման գործընթաց
- Ծրագրերի բյուջետավորում և հարկեր
- Ինչպես կազմակերպել ՀԿ գործունեությունը

Միկրոձեռնարկությունների զարգացում (ՄՉՁ)

ՄՉՁ ծրագրի շրջանակներում, որ համաֆինանսավորվում է ՄԱԿ-ի զարգացման ծրագրի, ՄՄԿ-ի և ՄԱԿ-ի Փախստականների զծով գերազույն հանձնակատարի գրասենյակի կողմից, սկսվել է նոր նախագիծ, որն ուղղված է փախստականների ինտեգրացմանն ու ինքնաբավ գործունեությամբ զբաղվելուն միկրո-ձեռնարկությունների զարգացման միջոցով: Վարկային տրամադրումների և բիզնես խորհրդատվության ու վերապատրաստման արդյունքում 53 հոգի մինչ այժմ օգտվել է վարկերից կամ աշխատանք ձեռք բերել:

ՄԱԿ-ի ԳՐԱԴԱՐԱՆՈՒՄ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱԿ

1. Մարդկային զարգացման զեկույց. Հայաստան, 1999: Մարդկային զարգացման հինգ տարին Հայաստանում: — Երևան, 1999: 94էջ: (Հայ., Անգլ.):
2. Աղքատության սոցիալական ցուցիչներ. կրթություն, առողջապահություն, տնային տնտեսություններ, կենսաբաշխատուներ: Երևան, 1999: 100էջ: (Հայ., Անգլ.):
3. Աշխատանքային շուկան Հայաստանում: Վերլուծություն ու քաղաքականություն: Երևան, 1999: 72էջ: (Անգլ.):
4. Հայաստանում երեխաների և կանանց իրադրության վերլուծություն. 1998: Երևան, 1998: 184էջ: (Հայ., Անգլ.):
5. ՄԱԿ-ի դերը ի դեմս գլոբալիզացիայի: Ժնև, 1999: 36էջ: (Անգլ.):
6. Գյուղատնտեսական տնտեսությունների սոցիալ-տնտեսական վիճակը և գյուղատնտեսական արտադրանքի գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում: Երևան, 1999: 105էջ: (Հայ., Անգլ.):
7. Մարդկային զարգացման զեկույց 1999: Գլոբալիզացիան մարդկային դեմքով: Հտ.1: Նյու Յորք, 1999: 441էջ: Հ. II : 263էջ: (Անգլ.):
8. Խեղացիության հասակ, ստեղծագործելու հասակ: Մոսկվա, 1999: 95էջ: (Ռուս.):
9. ՄԱԿ-ի 1999թ. տարեկան զեկույցը: Պատերազմների ու աղետների կանխումը. աճող մասշտաբի գլոբալ մարտահրավեր: Նյու Յորք, 1999: 139էջ: (Ռուս.):

Արդյոք զիստ՞ք, որ...

- ՄԱԿ-ը ձեռնարկել է պատմական Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը(1948), ինչպես նաև մարդու իրավունքների ավելի քան 80 պայմանագրեր, որոնք օգնում են պաշտպանել և առաջ քաշել յուրահատուկ իրավունքներ:
- ՄԱԿ-ի խաղաղապահ գործունեությունը կենսական միջոց է հանուն խաղաղության: Ամբողջ աշխարհում այժմ 71 երկրներից հավաքագրված ՄԱԿ-ի շուրջ 12 500 հոգուց բաղկացած զինվորական ու քաղաքացիական անձնակազմը ներգրավված է 14 գործողություններում:
- ՄԱԿ-ը և նրա գործակալությունները, ներառյալ

Համաշխարհային բանկը և ՄԱԶԾ-ն, առաջնահերթ միջոց են առաջ մղելու աղքատ երկրներում զարգացումը՝ տարեկան 25 մլրդ դոլարի համարժեք օգնություն ապահովելով:

- Միացյալ ՅուՆԻՍԵՖ-ԱՀԿ ծրագրով 6 մասաբեր հիվանդությունների դեմ պատվաստում է կատարվել աշխարհի երեխաների 80%-ին՝ տարեկան փրկելով ավելի քան 2 մլն երեխայի կյանք:
- ՀՊԾ-ն յուրաքանչյուր տարի ապահովում է աշխարհի սննդի օգնության 1/3-ը:
- ՄԱԿ-ի գործակալությունները օգնում են պաշտպանում են ավելի քան 25 մլն փախստականների և տեղահանվածների ամբողջ աշխարհում:

Մեր հասցեն. ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակ, Կարլ Լիբկեխտի 14, Երևան, 375010



UNDP:
 Դեռ. 52-93-41/58-31-94/151-453
registry@undp.am



UNFPA:
 Դեռ. 56-03-40/56-60-73
karend@unfpa.am



UNDP:
 Դեռ. 56-02-12/151-647
dpiarm@arminco.com



WFP:
 Դեռ. 58-05-38/56-49-04/151-572
wfp@arminco.com



UNICEF:
 Դեռ. 58-01-74/58-05-16/151-698
unicef@arminco.com



WHO:
 Դեռ. 56-43-67/56-53-24
who@ix2.yerphy.am



UNHCR:
 Դեռ. 56-47-71/58-48-92/151-451
unhcr@arminco.com



IOM:
 Դեռ. 58-56-92/151-793
iom@arminco.com

Համարում օգտագործվել են

ՄԱԿ-ի համակարգում գործող կազմակերպություններից և ՀՏԲ-ից ստացված նյութերը:

Մեկնաբանությունների կամ լրացուցիչ տեղեկությունների համար դիմել ՀՏԲ-ի երևանյան գրասենյակ: